–Ինքզինքնիդ մի՛ նեղէք, տիկին. եթէ կ'ուզէք՝ բերան չեմ շիներ ամենեւին։

•

Համբակ սափրիչ մը հարցուց մարդու մը, զոր կածիլէր.

–Քանի՞ եղբայր էք։

–Եթէ սրկէց ողջ առողջ դուրս ելլամ՝ չորս եղբայր ենք,– պատասխանեց ածիլուողը։

•

–Ո՛հ,– կ'ըսէր հիւանդ մը.– մարդ չի զար զիս տեսնելու։

–Այդպէս պէտք է որ ըլլայ. քեզի ո՞վ ըսաւ, որ պարտքերդ վճարես։

•

Երկու եղբայրներ այնչափ շատ կնմանէին իրարու, որ անոնց դրացին անգամ չէր կրնար զանոնք իրարմէ որոշել։

Ասոնցմէ մէկը կմեռնի. դրացին օր մը միւսին հանդիպելով կհարցընէ.

–Աստուածդ սիրես, ըսէ՛ ինձի, դո՞ւն մեռար թէ եղբայրդ։

•

–Պարոն Յակոբ, Քեաղրտխանէէն ախորժեցա՞ր նայինք, կրցա՞ր լաւ մը զուարճանալ։

–Շիտակը՝ շատ աղուոր տեսարան ունի ձեր Քեաղրտխանէն. բայց բազմութիւն շատ ըլլալուն աղէկ մը համը չառնուիր կոր. թէ որ այնչափ բազմութիւն չըլլայ նէ՝ շատ մարդ պիտի երթայ հոն։

•

Երկու քոյր խնդրոյ մը համար դատարան կներկայանան։

Նախագահն ասոնց մեծին կը հարցնէ.

–Քանի՞ տարու էք, օրիորդ։

–Քսան եւ ութը տարու եմ, պարոն նախագահ։

Նախագահը պզտիկին դառնալով կը հարցնէ.

–Դուք քանի՞ տարեկան էք։

–Երեսունըմէկ տարեկան, պ. նախագահ։

Նախագահն դիւանադպրին դառնալով կ'ըսէ.

–Չըլլայ որ սխալ արձանագրես. անդրանիկը պզտիկն է։